ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

2019 թվականի ապրիլի 18-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11բ դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր աշակերտները և բոլոր ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Նարինե Ոսկանյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների ու ստուգարքների նախապատրաստում և անցկացում:
2. Դպրոցական ու արտադպրոցական խմբակների պարապմունքներին աշակերտների մասնակցությունը և նրանց ցուցաբերած արդյունքները:
3. Ընթացիկ հարցեր (բացակայություններ, հերթապահություն, վարք և այլն):

1.Լսեցին.- Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների ու ստուգարքների նախապատրաստման և անցկացման հարցը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ դասղեկ Նարինե Ոսկանյանը: Նա ներկայացրեց 11բ դասարանի աշակերտների առաջադիմության արդյունքները մինչև այդ պահը: Նշվեցին այն աշակերտների անունները, ովքեր ունեն անբավարար գնահատականներ: Հենց այդ նպատակով էլ հրավիրվել է ժողով, որպեսզի աշակերտների մասնակցությամբ ու ծնողների ներկայությամբ մշակվեն ուղիներ նախ՝ գնահատականները շտկելու, հետո՝ կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքներին ու ստուգարքներին նախապատրաստվելու և անցկացնելու նպատակով: Դեռ մեկ ամիս կա՝ իրավիճակը շտկելու համար: Դպրոցի տնօրենությունը առարկայական մեթոդմիավորումների հետ և նրանց համաձայնությամբ որոշել են 8-11 դասարաններում բոլոր առարկաներից անցկացնել ստուգարքներ գրավոր և բանավոր ձևով: Այն անցկացվելու է ուսումնական տարվա վերջին շաբաթվա ընթացքում: Նախապես ուսուցիչների կողմից կազմվելու են տոմսեր և տրվելու են աշակերտներին՝ լավ պատրաստվելու համար: Ստուգարք են հանձնելու հետևյալ առարկաներից՝

1. հայոց լեզու և գրականություն բանավոր
2. օտար լեզու (ռուսերեն և գերմաներեն) բանավոր
3. բնագիտական առարկաներ (քիմիա, ֆիզիկա, կենս. և աշխարհ.) բանավոր
4. պատմություն (հայոց և համաշխարհ.) բանավոր
5. մաթեմատիկա գրավոր

Ստուգարքներ չեն հանձնելու ՆԶՊ, ՀԵՊ, ֆիզկուլտուրա, ձեռնարկատիրություն առարկաներից:

Յորաքանչյուր առարկայից ստուգարք ընդունելու համար կազմվելու է մեկ հանձնաժողով, որում ընդգրկվելու են տվյալ դասարաններում դասավանդող ուսուցիչները: Ստուգարքի գնահատականը անցկացվելու է մատյան՝ որպես ընթացիկ գնահատական:

Ստուգարք անցկացնելը ունի մեկ նպատակ՝ բարձրացնել աշակերտների պատասխանատվությունը ուսուցանվող առարկաների հանդեպ՝ խթանելով ուսման որակի և աշակերտների գիտելիքների մակարդակի բարձրացմանը:

Որոշեցին.- Հետևել ամենօրյա դասապատրաստումներին տանը և դպրոցում նպատակին հասնելու համար: Ուսուցիչներն ու ծնողները առավել ուշադիր լինեն այս մեկ ամսվա ընթացքում, որպեսզի կարողանան ժամանակին կատարել կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքներն ու հանձնել ստուգարքները:

2.Լսեցին.- Դպրոցական ու արտադպրոցական խմբակների պարապմունքներին աշակերտների մասնակցության և նրանց ցուցաբերած արդյունքների հարցը:
Ելույթ ունեցավ դասարանի ծնողկոմիտեի նախագահ Պետրոսյան Թեհմինեն:
Կատարվեց մտքերի փոխանակություն, որի ժամանակ աշակերտներն արտահայտեցին իրենց կարծիքները դպրոցում և դպրոցից դուրս անցկացվող բոլոր տեսակի միջոցառումների վերաբերյալ:
Ապրիլի 2-ին 11բ դասարանը կազմակերպեց և ներկայացրեց միջոցառում «Մերօրյա հերոսները» խորագրով, ինչպես նաև կազմակերպվեց հետաքրքիր միջոցառում՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին :
Դասղեկը հետևողական է եղել, հերթապահության,հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում: Պատժվել են նրանք, ովքեր կատարելեն կարգապահական շեղումներ, փորձել են խանգարել կամ լքել դասերը: Անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են հարթել ծագած խնդիրները:
Ծնողներին հիշեցվեց, որ 9-րդ դասարանը ավարտական ու քննական դասարան է: Լավ արդյունք ապահովելու համար պետք է լրջորեն նախապատրաստվել: Դրան պետք է օգնեն նաև ծնողներն իրենց ամենօրյա հետևողական աշխատանքով: Առաջին կիսամյակի արդյունքներից կախված կլինի նաև նրանց երկրորդ կիսամյակի որակական ցուցանիշը: Գալիք քննություններից առաջ անհրաժեշտ է որոշել, թե ընտրովի քննություններից որն են հանձնելու և վերջնական որոշում կայացնեն: Տարեվերջին քննություն հանձնող դասարանը հենց այսօրվանից արդեն պիտի նախապատրաստվի այդ պատասխանատու շրջանին:
Զեկուցողը նշեց նաև ուսման մեջ չառաջադիմող ու հետ մնացող աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, հերթապահության կատարման, ավագների աշխատանքի արդյունքները, տվեց դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:

Որոշեցին.- Գնահատել դասղեկի և բոլոր ուսուցիչների կատարած աշխատանքը դասարանում 100 % առաջադիմություն ապահովելու համար:Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորելու հարցում ծնողների կողմից և ամեն գործում օգնել դասղեկին:
Ավելի հաճախ լինել դպրոցում, կատարել դասալսումներ՝ աշակերտների կարգապահությունը և վարքը բարձր մակարդակի վրա դնելու համար, քանի որ այս դասարանում արդեն առկա են մեծ վարքային խնդիրներ և միայն համատեղ աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի հարթել առաջացած ծնդիրները:

3.Լսեցին.- Ընթացիկ հարցեր (բացակայություններ, հերթապահություն, վարք և այլն):

Ավագյան Աննան խոսեց տղաների կարգապահության ու վարքի մասին և նշեց, որ նրանք վաղվա զինվորներն են ու ծառայելու են հայոց բանակում:Որքան բարձր լինի նրանց մակարդակը, այնքան հեշտ կլինի ծառայությունը, իսկ զինվորի առաջին քայլերն արվում ու սկսվում են դպրոցից:

Բաղալյան Մանուշակը հորդորեց բոլոր տղաներին օրինակ ծառայել դասարանի աղջիկների համար իրենց վարքով և առաջադիմությամբ:

Այվազյան Լիլիթը և Խաչատրյան Թեհմինեն խորհուրդ տվեցին ուսման մեջ չառաջադիմող աշակերտներին հետևել լավ սովորողներին և հասնել նրանց:

Ծնողխորհրդի նախագահ Պետրոսյան Թեհմինեն առաջարկեց ուժեղացնել դասարանում կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների կողմից և ամեն հարցում հենարան լինել դասղեկին:

Որոշեցին.-Հաճախակի լինել դպրոցում, կատարել դասալսումներ, հետևել և օգնել աշակերտներին ամեն հարցում: Ստուգել երեխայի ամենօրյա դասապատրաստումները (տնային և գործնական աշխատանքների կատարում, օրագրի լրացում և այլն):

Վերջում ավագները բոլոր աշակերտների անունից խոստացան վերանայել իրենց գնահատականները, լինել կարգապահ և բարձր պահել դասղեկի ու ծնողների պատիվը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ ----------- Թ. Պետրոսյան

Քարտուղար՝ ----------- Ա. Ավագյան